ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/3.1-3-25
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. օգոստոսի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

2025 թվականի օգոստոսի 4-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N2/3.1-3-25 արձանագրությամբ կայացված որոշման կատարման վերաբերյալ՝

Նշվեց, որ

2025 թվականի օգոստոսի 4-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N2/3.1-3-25 արձանագրությամբ որոշվել էր՝

1. Առաջարկել Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված

դրամաշնորհային մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 4 (չորս) կազմակերպություններին շտկել իրենց կողմից ներկայացված հայտերում առկա տեխնիկական խնդիրները, մասնավորապես՝

- **«Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման ՀԿ-ին՝**

- անհրաժեշտ է նախկին փորձի նկարագրությանը՝ կցված պայմանագրի լուսապատճենին, ավելացնել նաև Ծրագրով ներկայացված մյուս փառատոների շրջանակում կնքված պայմանագրերի և դրանց շրջանակում ստորագրված հանձնման-ընդունման ակտերի լուսապատճենները,
- հստակեցնել Փառատոնի անցկացման ժամկետը:

- **«Սիգմա հոլդինգ» ՍՊԸ**-ին՝

- հստակեցնել Փառատոնի անցկացման ժամկետը (Ծրագրում ժամկետը սեպտեմբեր է նշված, իսկ ՏԻՄ-ի տեղեկանքում՝ օգոստոս),
- անհրաժեշտ է ապացուցել, որ Կազմակերպության կողմից արդեն իսկ ապահովված են Մրցույթի հրավերի 2.4.1 կետով նախատեսված մի շարք պահանջների կատարումը, մասնավորապես՝
  - Փառատոնի բրենդի ներկայացում, փառատոնի ազդարարում (create event page) սոցիալական թվային հարթակներում փառատոնի իրականացումից **առնվազն 2 ամիս շուտ,**
- ի լրումն պահանջվող փաստաթղթերի ներկայացնել նաև հայտում ներբեռնված փաստաթղթերի կնքված և ստորագրված տարբերակները:

- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ին՝

- անհրաժեշտ է նախկին փորձի նկարագրությանը, կցված պայմանագրերի լուսապատճեններին ավելացնել նաև նշված պայմանագրերի շրջանակում ստորագրված հանձնման-ընդունման ակտերի լուսապատճենները,
- անհրաժեշտ է ապացուցել, որ Կազմակերպության կողմից արդեն իսկ ապահովված են Մրցույթի հրավերի 2.4.1 կետով նախատեսված մի շարք պահանջների կատարումը, մասնավորապես՝
  - Փառատոնի բրենդի ներկայացում, փառատոնի ազդարարում (create event page) սոցիալական թվային հարթակներում փառատոնի իրականացումից **առնվազն 2 ամիս շուտ**:

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ին՝

- անհրաժեշտ է նախկին փորձի նկարագրությանը, կցված պայմանագրերի լուսապատճեններին ավելացնել նաև նշված պայմանագրերի շրջանակում ստորագրված հանձնման-ընդունման ակտերի լուսապատճենները,
- անհրաժեշտ է ապացուցել, որ Կազմակերպության կողմից արդեն իսկ ապահովված են Մրցույթի հրավերի 2.4.1 կետով նախատեսված մի շարք պահանջների կատարումը, մասնավորապես՝
  - Փառատոնի բրենդի ներկայացում, փառատոնի ազդարարում (create event page) սոցիալական թվային հարթակներում փառատոնի իրականացումից **առնվազն 2 ամիս շուտ**,
  - **առնվազն 1 ամիս շուտ** սոցիալական թվային հարթակներում փառատոնի գովազդի միացում,
  - **առնվազն 1 ամիս շուտ 1 ամիս տևողությամբ** փառատոնի անցկացման քաղաքի/համայնքի մարդաշատ վայրերում փառատոնի գովազդային արշավների կազմակերպում (թվային կամ տպագիր)՝ այդ թվում փառատոնի անցկացման քաղաքի/համայնքի մարդաշատ վայրերում և սոցիալական թվային հարթակներում փառատոնի գովազդային հոլովակի միացում՝ նվազագույնը 15 վրկ. տևողությամբ (փառատոնից 1 շաբաթ առաջ 7 օր ժամկետով):

2. **Առաջարկել՝** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 5 (հինգ) կազմակերպություններին վերանայել և նվազեցնել իրենց կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվներով սահմանված գումարները, մասնավորապես՝

- **«Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման ՀԿ-ի** կողմից **«Ղափամայի փառատոն»-ի** կազմակերպման համար նախահաշվով ներկայացված (8,430,000 (ութ միլիոն

չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,

- **«Սիգմա հոլդինգ» ՍՊԸ**-ի կողմից **«Խաղողի փառատոն Գյումրի 2025»-ի** կազմակերպման համար նախահաշվով ներկայացված (20,945,000 (քսան միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,
- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի կողմից **«IjeWine. Գինու և երաժշտության միջազգային փառատոն»-ի** կազմակերպման համար նախահաշվով ներկայացված (11,465,000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 8,400,000 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (ներառյալ՝ 1,400,000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով,
- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ի կողմից **«EnoFest Armeina 2025 (Էնոֆեստ Արմենիա 2025)»** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված (25,620,833.30 (քսանհինգ միլիոն վեց հարյուր քսան հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 7,000,000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,
- **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ-ի կողմից** «HAY at Jazz» («Հայը՝ ջազում, ջազը՝ բակում») փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված (17,604,000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր չորս հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով, որը չի կարող ներառել 2.2 և 2.3 կետերով սահմանված կազմակերպչական ծախսերը:

Մրցութային հանձնաժողովի կողմից նշվել էր, որ վերոգրյալ առաջարկները ընդունելու դեպքում մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող կազմակերպությունները հաղթող կճանաչվեն և իրենց հետ կկնքվեն համապատասխան դրամաշնորհային պայմանագրեր:

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը» միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 4 (չորս) կազմակերպություն՝

- **«Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման ՀԿ-ն**,
- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ն,
- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ն,
- **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ**-ն

ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել են Ծրագրի ֆինանսական նախահաշվի և իրենց կողմից ներկայացված հայտերում առկա տեխնիկական խնդիրների շտկված տարբերակը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի շտկված տարբերակներում առկա տեխնիկական վրիպակները կճշտվեն պայմանագրերի կնքման փուլում:

- **«Սիգմա հոլդինգ» ՍՊԸ**-ն, երախտագիտություն հայտնելով Զբոսաշրջության կոմիտեի առաջարկի համար, տեղեկացրել է, որ չի կարողանում հաղթահարել որոշ բյուրոկրատական խոչընդոտներ և տրամադրել կոմիտեի պահանջով սահմանված փաստաթուղթը:

Միաժամանակ հանձնաժողովին ներկայացվեց, որ ներկայումս առկա է խնդիր: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի կողմից իրականացվող միջոցառումը՝ EnoFest Armenia 2025 փառատոնը, նախատեսված է իրականացնել 2025 թվականի օգոստոսի 15-ին: Մրցույթի բացումը տեղի է ունեցել 2025

թվականի հուլիսի 22-ին, իսկ հուլիսի 28-ին տեղի է ունեցել Մրցույթի հայտերի գնահատման նիստը: Նիստի ընթացքում, գիտակցելով սուղ ժամկետների առկայությունը և այն հանգամանքը, որ հրավերի պահանջներից որոշները (սոցիալական թվային հարթակներով հրապարակումների տեղադրում, միջոցառման էջի ստեղծում և այլն) պետք է իրականացված լինեին միջոցառումից առնվազն 2 ամիս առաջ, Հանձնաժողովը որոշեց առաջարկել կազմակերպությանը կամ ապացուցել առնվազն 2 ամիս առաջ կատարված գործողությունների իրականացման փաստը, կամ հետաձգել փառատոնի կազմակերպումը: Բացի այդ՝ Կազմակերպությանն առաջարկվել է ներկայացնել նաև նախկին փորձը հավաստող պայմանագրերի հանձնման-ընդունման ակտերը: Առաջարկն ընդունելու դեպքում Կազմակերպությունը կարող է հաղթող ճանաչվել մրցույթի շրջանակում: Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում Կազմակերպությունը պատասխանել է, որ չի կարող հետաձգել միջոցառումը, քանի որ ունի միջազգային հյուրեր, որոնց ամրագրումներն արդեն իսկ արված են: Հանձնման-ընդունման ակտերի փոխարեն Կազմակերպության կողմից ներկայացվել են հաշիվ-վավերագրեր, վճարման անդորրագրեր: Ներկայացվել են նաև հիմնավորումներ և ապացույցներ առնվազն 2 ամիս առաջ համապատասխան հարթակներում փառատոնի լուսաբանման համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում ստանալ մասնագիտական աջակցություն ՀՀ ԷՆ աջակցող ստորաբաժանումներից՝ ՀՀ ԷՆ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման և իրավաբանական վարչություններից, Կազմակերպությանը հաղթող ճանաչելու կամ հայտը մերժելու որոշում կայացնելու հարցում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝
   - **«Սիգմա հոլդինգ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած 3 (երեք) կազմակերպության՝
   - **«Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման ՀԿ**-ի,
   - **«Երևանյան հեռանկարն միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի,
   - **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ**-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 3 (երեք) կազմակերպության՝
   - **«Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման ՀԿ-ի** հետ **«Ղափամայի փառատոն»-ի** կազմակերպման համար՝ 3,892,000 (երեք միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,
   - **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի հետ **«IjeWine. Գինու և երաժշտության միջազգային փառատոն»-ի** կազմակերպման համար՝ 8,400,000 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (ներառյալ՝ 1,400,000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով,
   - **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ-ի** հետ **«HAY at Jazz» («Հայը՝ ջազում, ջազը՝ բակում»)** փառատոնի կազմակերպման համար՝ 5,800,000 (հինգ միլիոն ութ հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով:

3. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ի վերաբերյալ որոշում կկայացվի ՀՀ ԷՆ աջակցող ստորաբաժանումների կողմից դիրքորոշում ստանալուց հետո:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Ա.Ոսկանյան - _____

Շ.Հովսեփյան - _____